ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի մարտի 24-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/03-1» պայմանագրում 2023 թվականի հուլիսի 25-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Վաճառողի առաջարկության առկայությամբ պայմանավորված՝ ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգում:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ժամկետը» սյունակում նշված «120 օրացուցային օր» բառերը փոխարինվել են «150 օրացուցային օր» բառերով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.8 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
24.03.2023թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/ 03-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «07» 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ա. Հայրապետյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Սմարթլայն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 24.03.2023թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/03-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրով սահմանված 160000 կգ A4 ֆորմատի թղթից՝ չմատակարարված 75000 կգ A4 ֆորմատի թղթի մասով, ապրանքի մատակարարման երկրորդ փուլում, Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ժամկետը» սյունակում նշված «120 օրացուցային օր» բառերը փոխարինել «150 օրացուցային օր» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***Սմարթլայն ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Խորենացի 112
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01548908
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1150009537660100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա. Հայրապետյան	Տնօրեն՝ Տ. Ղարիբյան
/ստորագրություն/ Կ.Տ.	/ստորագրություն/ Կ.Տ.